պատրաստել էր, նոյնիսկ կոմունիստներ անգամ նշանակել էր և մեր երկիրը պիտի դար»։*)

Այս վաւերագրերը կասկած չեն թողնում, որ բոլշևիկների և Թիւրքերի միջև գոյութիւն ունէր շատ սերտ բարեկամութիւն և գործակցութիւն։ 1920թ. ամառը Մոսկուա էր գտնուում Անգորայի մի մեծ պատուիրակութիւն՝ Բէքիր Սամիի գլխաւորութեամբ։ Բաքուի «Կոմունիստ»-ը յուլիս 20-ին հաղորդում էր Արմաւիրից, թէ Մոսկուա անցաւ Թիւրքական մի պատուիրակութիւն Բէքիր Սամի բէյի նախագահութեամբ։ Պատուիրակութեան ասելով Թիւրքիայում մեծ յաջողութիւն ունի կոմունիստական շարժումը։ Բէքիր Սամի բէյը յայտնել է, որ իրենք գնում են Մոսկուա Երրորդ Ինտերնատիոնալի երկրորդ համագումարին մասնակցելու և խորհրդային իշխանութեան հետ կապեր հաստատելու նպատակով։

Միւս կողմից, Բաքուն դառնում էր քեմալականների գործնական աշխատանքի կենտրոն։ Յուլիս 20-ին Մոսկուայից Բաքու վերադարձաւ Խալիլ փաշան և մեծ հանդիսաւորութեամբ ընդունուեց խորհրդային իշխանութեան կողմից։ Նա անմիջապէս ձեռնարկեց «իսլամական բանակի» կազմակերպութեան։ Այդ բանակի կենտրոն նշանակուեց Ղուսար աւանը, ուր տեղի էր ունենում կամաւորների արձանագրութիւնը, մարզանքն ու կազմակերպումը։ Խորհրդային իշխանութիւնը աջակցում էր Խալիլ փաշային. հոգում էր բանակի ծախսը, հագուստը, զէնքն ու ռազմամթերքը և այլն։ Բանակի սպայակոյտի պետը խորհրդային գլխաւոր սպայակոյտի մի սպայ էր։ Թուրքստանի դանդաղ կողմերից՝ Ղրիմից, Կաղանից, Ուֆայից, Թուրքեստանից խումբ-խումբ ուղարկուում էին մահմեդական երիտասարդներ և մտցուում բանակը։ Խալիլ փաշայի տրամադրութեան տակ էին և Սիբիրից վերադարձող Թիւրք գերիները, կարգապահութիւնը «իսլամ բանակում» շատ դաժան էր։ Զօրամասերը պատրաստուում էին արագութեամբ, այդ բանակով Խալիլ փաշան, Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով, պիտի անցնէր Թիւրքիա։

Այսպէս, մինչ ադրբէջանցիներն ու Թիւրքերը բացայայտ կերպով դաւեր էին լարում Հայաստանի դէմ, կոմունիստները, մանաւանդ հայ կոմունիստները, անսանձ ու մոլեգին պայքար էին մղում նոյն Հայաստանի դէմ։ Անհաշիւ են և անորակելի այդ դաւերը։ Բոլշևիկները անվերջ գրում ու խօսում էին Հայաստանում տիրող «սպիտակ տեռորի» մասին, տարածում էին չինծու և գրգռիչ տեղեկութիւններ, Հայաստանը ներկայացնում էին իբրև մի երկիր, ուր դահիճներն են թագաւորում, ուր ամէն օր կոմունիստների դանդաղածային սպանութիւններ են կատարուում։

Ադրբէջանի խորհուրդների պաշտօնաթերթ «Կոմունիստ»-ի մայիս 20-ի համարում կարդում ենք Հայաստանից Աղստաֆա հասած բոլշևիկեան մի պատուիրակութեան դիմումը 11րդ բանակին.

---

*) Անատոլուի Գործակալութեան հեռագիրը «Մարմարա», 1926թ., փետր. 3.